

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ

Դ Բ Ա Մ Ա

Գերհարտ Հառովանի

Զ Ա Ր Ե Ր Ո Ր Դ Գ Ա Ը Ե Վ Ո Յ Ւ Թ Ի Ւ Խ

Ժամանակը՝ ճաշից յեռոլ, չօրսից մինչև հինգը, Սեղանի առաջ նստած են Կէթէն և տիկին Ֆօկերատու Կէթէն զրապուած է երեխայի շաղիկ կարելով, տիկին Ֆօկերատու՝ ձեռագործով, Կէթէն սաստիկ նիհարել է, Անցնում է մի քանի վալրկեան, Յեհաննէս ներս է մտնում իր պարագմունքի սենեակից, Նա զլիարկը դեռ լիսին չի ծածկել, ամառուայ վերարկուն կիսահազած, մասաղիր է դորս գնալու

ՑՈՀ. Աննան գնաց:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Բարձր հառաջելով). Հէնց նոր գնաց,

ՑՈՀ. (Մօտենալով Կէրեկին համբուրում և նրա հակատը). Դու կանոնաւոր կերպով ընդունում ես քո զեղը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ախ, այդ յիմար դեղերը, շատ կ'օգնեն ինչպէս չէ: Ես գիտեմ ինչ բան աւելի լաւ կ'օգնէր:

ՑՈՀ. Ախ մնայր, մնայր:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ես լուսում եմ:

Տ. Կէթէ. Այո, այն, ես ընդունում եմ: Առհասարակ հիմա ոչինչ...

ՑՈՀ. Իսկապէս այսօր դու աւելի լաւ տեսք ունես:

Տ. Կէթէ. Այո, աւելի լաւ եմ:

ՑՈՀ. Քեզ լաւ պահպանիր: Ադիեօ: Մենք չուտով կը վերադառնանք:

Տ. Կէթէ. Հեռո՞ւ էք գնում:

ՑՈՀ. Ո՞չ, գնում ենք անտառը: Յաեսութիւն: (Դուրս և գալիս պատեկամբը):

Փոքր դադար ևս առում է երկաթուղու գնացքի աղմուկն ու սուլոցը: Ապա հեռում հնչում է կալարանի զանգը:

*) ՏԵՇ և ՄԱՐԴԻԿ Ն 3, 4, 5, 6.

Տ. ՖՈԿԵԲԱՏ. Լաւում է կայարանի գանգը:

Տ. ԿԵԹԵ. Քամին է բերում ձայնը, մայրիկ: (Թռղնում է գործը եւ մտածունելի մեջ ընկնում):

Տ. ՖՈԿԵԲԱՏ. (Թռուցիկ հայեացք ձգելով): Եթ ինչի մասին սկսեցիր մտածել, ԿԵԹԵ-բալիկ:

Տ. ԿԵԹԵ. (Շարունակելով իր կարը): Ախ, ամեն բանի մասին:

Տ. ՖՈԿԵԲԱՏ. Օրինակ ինչ բանի:

Տ. ԿԵԹԵ. Օրինակի համար կան արդեօք մարդիկ, որոնք զոշալու բան չունեն:

Տ. ՖՈԿԵԲԱՏ. Ի հարկէ ոչ, ԿԵԹԻՒՆ:

Տ. ԿԵԹԵ. (Սկսուրին ցոյց տալով կարուածքը): Կարել ահա այսպէս, շուրջը, մայրիկ: (Վերցնում է տապակի վերեւի եւ ներքեւի ծայրերից եւ բառում): Ես կարծում եմ երկայնութիւնը բաւական է:

Տ. ՖՈԿԵԲԱՏ. Այս, շատ կարճ պէտք չէ: Աւելի լաւ է մի քիչ երկայն: Երեխաները շուտ են մեծանում:

Երկուսն էլ եռանդով աշխատում են: Փոքր դադար:

Տ. ԿԵԹԵ. (Կարելով): Ես երբեմն իմ վատ տրամադրութեամբ Համնէսին շատ վշտացրել եմ: Նա էլ յաձախ ինձ բաւական վիշտ է պատճառել: Բայց մարդ ինչ կարող է անել իր ընաւորութեան դէմ: ահա դժբախտութիւնը ինչում է: (Կարճ եւ դառն նեզնութեամբ): Զափից աւելի վստահ էինք: Ոչ մի բանի վրայ ուշք չէինք դարձնում (Հառաջում է): — Այս շապիկը գիտես ինչ է յիշեցնում: անկելանոցում ապրում էր մի պառաւ աղախին... նա ինքը իր համար կարել էր շատ առաջուց պատան և պահում էր իր արկղում: Մի անգամ նա ինձ ցոյց տուեց այդ պատանը: Այս ժամանակ ես բոլորովին մելամաղձոտ դառայ:

Տ. ՖՈԿԵԲԱՏ. Խելացնոր պառաւ:

Փոքր դադար:

Տ. ԿԵԹԵ. (Կարք շարունակելով): Փոքրիկ գիգենը լաւ տղայ է: Երէկ ես նրան կանչեցի այստեղ և ցոյց էի տալիս նըրան պատկերներ: Իսկ նա յանկարծ ինձ հարցնում է: Ճիշտ չէ, մօրաքոյր ԿԵԹԵ, թիթեռը մարդ է, իսկ շերեվիկոթիկը (միջատ) նրա կինը:

Տ. ՖՈԿԵԲԱՏ. (Բարեսութեամբ ժպտալով):

Տ. ԿԵԹԵ. (Շատ օյինբազն է): Ապա չօշափում էր կոպերս և հարցնում: դրանց տակ աչքերը քննում են:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Երեխաները երբեմն շատ զուարձալի են լինում:

Տ. Կէթէ. (Ինչ որ մեղմ, վետալի զուարճութեամբ): Եւ յետոյ նա միշտ ասում է կայծել փօխանակ կայծեր: Դրանով ես միշտ նրան բարկացնում եմ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Միժազելի է. կայծել: (Միժազում է):

Տ. Կէթէ. (Կարք գցում է ծնկերի վրայ): Էլ ինչ դառնութիւններ ասես մարդ չի ստեղծում իր համար երեխայ ժամանակ: Ես գեռ յիշում եմ, երբ ես փոքր էի, մի քանի տարի շարունակ, հէսց որ կարտօֆիլի դաշա էի տեսնում, ջերմագին ինդրում էի Աստուծուց: «Ախ, Տէր Աստուած, այսպէս արա որ գէթ մի անգամ գտնեմ մեռելի-զլուխ կոչուած թիթեռը»:—Բայց ես ոչ մէկն էլ չը գտայ:— (Խոնջած բարձրանում է տեղից եւ հառաջելով): Յետոյ մարդ ունենում է ուրիշ դառնութիւններ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ո՞ւր ես գնում: Մի քիչ էլ դեռ կաց այստեղ:

Տ. Կէթէ. Պէտք է տեսնել արդեաք չի դարթել Ֆիլիպպիկը:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Կէթէ, այդպէս անհանգիստ մի եղիք, Ամեն բան կը հոգացուի:

Տ. Կէթէ. (Մնում է կանգնած արողի մօս, ձեռքը դնելով նակատին): Թող մայրիկ: Ես պէտք է մտածեմ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Քնեութեամբ համոզելով): Դու չը պէտք է բնաւ մտածես: Եկ, մի բան էլ պատմիր ինձ: (Նա նստեցնում է կամազուրկ Կէրէին արողի վրայ): Եկ, նստիր:—Յոհաննէսն էլ երբ փոքր էր այդպիսի զուարձալի զաղափարներ ունէր:

Տ. Կէթէ. (Նայում է բարցածի պէս, լայն բացած աշերը ուղղած դաշնամուրի վերելից կախուած պատկերի վրայ): Ախ, որքան փառաւոր է հայրիկը՝ վերարկու հագած: Նրա մաքովն էլ չի անցնում, որ նրա աղջիկը... (Նրա ձայնը խեղդում է արտասուժից):

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Նկատելով այդ): Բայց Կէթէ-բալիկ:

Տ. Կէթէ. (Դժուարութեամբ խօսելով): Խնդրում եմ, թողինձ:

Երկուսն էլ կարճ ժամանակ շարունակում են աշխատել:

Տ. Կէթէ. (Նարունակելով կարել): Դու ուրախացար, երբ Հաննէսը ծնուեց:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Սրտանց, Կէթիէն: Իսկ դու չուրախացար Ֆիլիպպիկով:

Տ. Կէթէ. Իսկապէս չը գիտեմ. (Նորից վեր է կենում): Ախ, աւելի լաւ է գնամ մի քիչ պառկեմ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Նոյնպես վեր է կենում. ույում է Կերեի ձեռքը): Այս, գնա, եթէ դու քեզ լաւ չեմ զգում:

Տ. ԿԵԹԵԼ. Բռնիր ձեռքս տես, մայրիկ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Կատարում է): Հա, բալիկս, սառուցի նըման հն:

Տ. ԿԵԹԵԼ. Վերցրու ասեղը. (Մեկնում է նրան ասեղը):

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Չի ուզում վերցնել): Ի՞նչիս է հարկաւոր ասեղը:

Տ. ԿԵԹԵԼ. Ահա նայիր: (Արագ մի քանի անգամ ծակոտում է իր ափի մեջ):

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Յետ է քառում նրա ձեռքը): Վահ, այդ ի՞նչ է, ի՞նչ ես անում դու:

Տ. ԿԵԹԵԼ. (Ժագտալով): Բոլորովին յաւ չի պատճառում: Բոլորովին: Եւ ես ոչինչ չեմ զգում:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Այդ էլ ի՞նչ մտաւ գլուխդ: Գնանք, այս գնանք՝ մի քիչ պառկիր: Մի քիչ պառկիր: (Օգնելով տանում է Կերեին ննջարան):

Մի փոքր դադարից յետով մտնում է Բրառունը: Վերցնում է զլիարկը, վերարկուն և կախում զգեստակալից:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Հանելով գլուխը ննջարանից): Ախ, այդ դուք էք, պ. Բրառուն:

ԲՐԱՌՈՒՆ. Բարի երեկոյ, տիկին Ֆօկերատ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Խակոյն գալիս եմ: (Նա յիտ է քառում գլուխը, մի քանի վայրկեանից յետոյ ներ է մտնում, շապով մօսենում է Բրառունին եւ նապնեպով նրա ձեռքն է կոխում մի նեռագիր): Հիմա խորհուրդ տուէք ինձ, ի՞նչ անել: (Մինչեւ որ Բրառունը կարդում է նա երկշու լարուածուրեամբ նետեւում է նրա դեմքի արտայատուրեանը):

ԲՐԱՌՈՒՆ. (Կարդալուց յետոյ): Դուք յայտնել էք պարս Ֆօկերատին թէ բանը ի՞նչումն է:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ոչ մի ակնարկով: Ոչ, ոչ, ոչ: Ես նոյն իսկ միրտ չէի անիլ ես նրան միայն գրեցի որ վատ չէր լիսի եթէ գար, որովհետեւ... որովհետեւ ես դեռ շուտ չեմ կարող այստեղից հեռանալ ե որովհետեւ Կէթէն գեռ ես կազդուրուել է ոչ բոլորովին: Էլ ուրիշ ոչինչ չեմ գրել: Մինչեւ անգամ չեմ գրել որ օրիրորդ Աննան դեռ այստեղ է, պարս Բրառուն:

ԲՐԱՌՈՒՆ. (Մի փոքր մտածելուց յետոյ վեր է քառում ուսերը): Այս: Բայց ես ոչինչ չեմ կարող ասել:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Աւելի վախեցած): Դուք գտնում էք որ ես լաւ չեմ արել: Վերջապէս աւելի լաւ էր որ ես չը գրէի: Բայց

ախր Կէթէն հալուում մաշտում է: Խսկ եթէ պառկի, այն ժամանակ... այն ժամանակ ես չը զիտեմ, էլ Բնէ կը լինի: Հիմա էլ նա ստիպուած է շարունակ պառկել շորերով անկողնում: Հէնց այժմ կրկին նա պառկել է: Ես այլ ևս չեմ կարող, չեմ կարող, պարո՞ն Բրառուն, ինձ վրայ վերցնել պատասխանատութիւն:

(Սիփուած է խնչել):

ԲՐԱՌԻՆ. (Նայելով նեռագրին): Պարո՞ն Ֆօկերատը ժամի վեցի գնացքով է զալիս Հիմա ժամի քանիսն է:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Դեռ հնդի կէսը չը կայ:

ԲՐԱՌԻՆ. (Մի բանի վայրկեան էլ մտածելուց յետոյ): Այս եօթ օրուայ ընթացքում ոչինչ չը փոխուեց:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Անմիտքար շարժում է զլաւխը): Ոչինչ:

ԲՐԱՌԻՆ. Եւ Աննան հեռանալու մտադրութիւն անգամ չի ցոյց տալիս:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ոչ—ոչ մի անգամ եւ Յոհաննէսը, կարծես ուղղակի կախարդուած լինի: Առաջ էլ նա անտանելի էր, բայց վերջի վերջոյ նա անում էր այն, ինչ նրան ասում էինր Խսկ հիմա ոչ նայում է, ոչ էլ լսում: Միայն այդ անձնաւորութիւնն է որ կայ: Միշտ միայն այդ անձնաւորութիւնը, ոչ մայր, ոչ կին, պարո՞ն Բրառուն: Ախ, Սատուած: Ի՞նչ անել Ամրող զիշերներ քունս չի տանում: Այսպէս էլ եմ քննում, այնպէս էլ Ուղղակի չը գիտեմ Բնէ անել:

Թաղար:

ԲՐԱՌԻՆ. Խսկապէս ես էլ չը զիտեմ՝ արդեզր լաւ է որ պարո՞ն Ֆօկերատը զալիս է: Հաննէսը զրանից աւելի ես կը զրգուուի... Եւ յետոյ... յետոյ նա ուղում է օրիորդի առաջ ցոյց տալ... այնուամենայնիւ երբեմն ինձ թւում է որ Հաննէսը մի կերպ ինքը կ'ազատուի կրկին:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ինձ էլ էր այդպէս թւում: Հէնց այդ է պատճառը որ այն ժամանակ երբ նա նրան յետ բերեց, ես կրկին թողի ինձ համոզելի Այդ էր պատճառը որ ես այստեղ մնացի: Բայց քանի գնում է՝ բանը վատ կերպարանք է ստանում: Հիմա չի կարելի՝ զրա մասին ձայն ծլտուն անգամ հասնել: Կէթէին էլ ոչինչ չեմ համարձակում ասել: Էլ ում պիտի դիմեմ:

ԲՐԱՌԻՆ. Տիկին Կէթէն այդ մասին Հանսի հետ ոչինչ չի խօսել:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Խօսել է, մի անգամ—ամրող զիշեր զարւթուն մնացին: Աստուած գիտէ ինչնը ասացին իրարու Բայց Կէթէն չափազանց համբերող է: Նա գեռ բռնում է Հանսի

կողմը, երբ ես մի քան եմ առում: Նոյն խակ այդ... այդ կնոջ... այդ արարածին ինչպէս հարկն է չի հասկանում: Նրան երբեմն դեռ պաշտպանում է:

Փոքր գաղաք:

ԲԲԱՌԻՆ. Արդէն ես ինքս ինձ հարց եմ տալիս—արդեօք լաւ չէր լինի որ ես խօսեմ օրիորդ Աննայի հետ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Արագուքեամբ): Այս, գուցէ այդ լաւ լինի:

ԲԲԱՌԻՆ. Ես մինչև անզամ ուզում էի նրան գրել... Բայց ամենից կարևորը այն է, տիկին մօկերատ, որ եթէ պ. Ֆօկերատը իր կողմից խառնուի—այդ կարող է իմ կարծիքով չափազանց փշացնել գործը:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ի հարկէ, ի հարկէ: Բայց աւել ի՞նչ է մնում ինձ անել իմ սրանեղութեան մէջ: Այս, եթէ դուք... եթէ դուք իսկապէս յանձն առնէիք օրիորդի հետ խօսել: (Լսում են Աննայի եւ Յոհաննեսի ձայները): Այս, Տէր Աստուած: Ես այժմ չեմ կարող նրան տեսնել: (Հեռանում է դրսի դռնով):

ԲԲԱՌԻՆ. (Յապաղում է: Յետոյ մինչեւ երանց մտնելը, նոյն պէս նեռանում է դրսի դռնով):

Օրիորդ Աննան մտնում է պատշկամբից:

ՕԲ. ԱՆՆԱ. (Վայր է դնում զիխարկը: Խօսում է բաց դռան միջով Յոհաննեսի նետ, որ դեռ շարունակում է մնալ դրսում պատշկամբի վրայ): Հետաքրքիր բան կայ, պարո՞ն դօկտօր:

ՅՈՀ. Երեկ մի բան է պատահել: Մի պօլիցիական նաւակը նստեց: (Ներս է մտնում): Երեկ կրկն մի գժրախտութիւն պատահեց:

ՕԲ. ԱՆՆԱ. Մելամաղձային նախազգացնում միայն:

ՅՈՀ. Այսուեղ յաճախ են պատահում այդպիսի դէպքեր: Այդ մի շատ վտանգաւոր ջուր է:—Այդ ի՞նչ է ձեր ձեռքին, օս րիորդ:

ՕԲ. ԱՆՆԱ. «Կատուի թաթեր», պարո՞ն դօկտօր: Այդ բոյսից ես կը վերցնեմ ինձ հետ իրեք յիշատակ:

ՅՈՀ. Այսինքն երբ որ ճանապարհ ընկնէք այսոեղից: Բայց այդ այնքան էլ շուտ չի լինի:

ՕԲ. ԱՆՆԱ. Կարծում եք:

Փոքր դադար, որի ընթացքում երկուան էլ սենեակում, դանդաղ լետ ու առաջ են անում, ամեն մէկն առանձին:

ՕԲ. ԱՆՆԱ. Ակսել է արդէն շուտ մթնել:

Յուլիս, 1901.

ՅՈՒՆ. Եւ ցուրտ է, հէնց որ արել մայր է մտնում ձրաւ գլուխմա:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինչպէս կամիքը—կամ մի քիչ հանգստանաւով մթնշողում (նսում է):

ՅՈՒՆ. (Նմանապէս նսում է, Աննայից հեռու, առաջին պատահած արռոի վրայ) Մի բիշ լուրիւնից յետոյ): ՄԹՆՇՈՂ. —Այդ ժամանակ զալիս են հին յիշողութիւններ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հեքիաթներ, այնպէս չէ:

ՅՈՒՆ. Այո, հեքիաթներ էլու—Ախ, հրաշալի հեքիաթներ են լինում:

ՕՐ. ԱՆՆԱ. Օ, ի հարկէ:—Եւ գիտէք, սովորաբար ինչպէս են վերջանում լաւագոյնները:—Յետոյ ես հագայ բիւրեղեայ ոսնաման—և յետոյ խփեցի մի քարի—և յետոյ նա «ծղնգաց»—և յետոյ նա երկու կտոր եղաւ:

ՅՈՒՆ. (Կարե լուրիւնից յետոյ): Իսկ այդ միթէ մելամաղամային նախազգացում չէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ ես չեմ կարծում: (Վեր է կենում, դանդաղ մօտենում է դաշնամուրի առաջ դրած արռոին, նսում է եւ շնչում ձեռների վրայ):

ՅՈՒՆ. (Նմանապէս վեր է կենում, դանդաղ մի քանի քայլ անում եւ կանգնում Աննայի յետելից): Միայն մի երկու ամանակ խփէք: Պատճառէք ինձ հաճոյք: Եթէ ես միայն մի քանի բոլորովին պարզ հնչիւններ լսեմ, այդ արդէն ինձ կը գոհացնի:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չը գիտեմ նուագել:

Բ (Մեղմ յանդիմանուրեամբ): Ախ, օրիորդ Աննա,—ինչու էք դուք այդ ասում: Միայն թէ դուք չէք ուզում, այդ ես գիտեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց ես ամբողջ վեց տարի է ձեռք չեմ տուել դաշնագարկերին: Առաջին անգամ կրկին այս գարնանից սկսեցի մի քիչ ածել: Եւ բացի այդ՝ ես այնպէս, տնգտնզացնում եմ միայն:—Այնպիսի տիսուր, անմիսիթար երգեր, որոնք լսել եմ մի ժամանակ մօրից:

ՅՈՒՆ. Գուցէ դուք մի այդպիսին կ'երգէիք: Մի այդպիսի տիսուր, անմիսիթար երգ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Ծիծաղում է): Ահա տեսնում էք, դուք արդէն ինձ ծաղրում էք:

ՅՈՒՆ. Ինչպէս տեսնում եմ, օրիորդ, դուք չէք ուզում ինձ հաճոյք պատճառել:

ՕՐ. ԱՆՆԱ. Այս, ճիշտ է, պ. դօկտօր, ես մի անզիտան,
քմահաճ արարած եմ:

ՅՈՒՀ. Ես այդ չեմ ասում, օրիորդ Աննա:

Փաք դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բարձրացնում է դաշնամուրի գլուխը: Դնում
է մատները դաշնազարկերի վրայ: Խորհում է): Եթէ ես մի ու-
րախ բան իմանայի...

ՅՈՒՀ. (Նսում է մի հեռու անկիւնում, գլուխը առաջ ուղ-
ղած, ոտները իրար վրայ գցած, յենուել է ծնկերի վրայ արմուն-
կով եւ ձեռքը դրել ականջին):

ՕՐ. ԱՆՆԱ. (Ձեռները գրկում, խօսում է դանդաղ եւ ընդ-
հատումներով): Իսկապէս մի նշանաւոր ժամանակ ենք մննք ապ-
րում: Ինձ թւում է որ կարծես ինչ որ հեղձուկ, ճնշող մի բան
աստիճանաբար մեզնից հեռանում է: —Դուք ևս նոյնը չեք զգում,
պարո՞ն դօկտօր:

ՅՈՒՀ. (Հազելով): —Այսինքն ի՞նչ...

ՕՐ. ԱՆՆԱ. Մի կողմից մեզ ստրկացնում էր խեղդուկ եր-
կիւզը, միւս կողմից՝ խաւար մոլեսանդութիւնը: Այժմ այդ չա-
փազ անց լարուածութիւնը կարծես հարթւում է: Կարծես օդի
մի թարմ հոսանք, ասենք քսաներորդ զարից, ներս է թափ-
ւում: —Դուք ևս նոյնը չեք զգում, պարո՞ն դօկտօր: —Օրինակի
համար, Բրառունի նման մարդիկ մեզ վրայ այնպիսի տպաւորու-
թիւն են թողնում, ինչպէս բուերը լոյս ցերեկով:

ՅՈՒՀ. Զը զիտեմ, օրիորդ: Բրառունի վերաբերմամբ յա-
լորովին ճիշտ է: Բայց ևս դեռ չեմ կարողանում համակա-
սուրախութեամբ: Ես չը գլուխեմ...

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չեմ խօսում մեր անհատական հակա-
տապրի մասին: Մեր անհական փոքրիկ ճակատազիրը բոլո-
րովին մի կողմը թողննաք, պարո՞ն դօկտօր:

Դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վեցնում է դաշնամուրի վրայ մի ակիօռ եւ
օպունակում է նաև):

ՅՈՒՀ. (Երբ հնչյունները մարում են): Յետոյ:

ՕՐ. ԱՆՆԱ. Պարո՞ն դօկտօր:

ՅՈՒՀ. Զը կամնում նուազել լնուրում եմ, խնդրում եմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես կամնում էր ձեզ մի բան ասել — բայց
դուք չեք պէտք է զայրանաք, դուք պէտք է բոլորովին հանգիստ
և խոհեմ ձեզ պահեք:

ՅՈՒՀ. Ինչումն է բանը:

ՕԲ. ԱՆՆԱ. Գիտէք, իմ ժամանակը լրացել է: Ես պէտք է ճանապարհուեմ:

ՅՈՒ. (Խոր նառաջում է, վեր է կինում տեղից եւ դանդաղ ժայլում է յետ ու առաջ):

ՕԲ. ԱՆՆԱ. Պարոն Յոհաննէս. մենք սկսում ենք ընկնել թոյլ բնաւորութիւններին յատուկ սխալների մէջ: Մենք պէտք է ուշք դարձնենք աւելի ընդհանուր վշտերի վրայ: Մենք պէտք է սովորենք աւելի հեշտութեամբ տանել մեր անձնականը:

Փայք դադար:

ՅՈՒ. Ուրեմն դուք վճռել էք գնալ:

ՕԲ. ԱՆՆԱ. (Մեղմ, բայց վճռողաբար): Այս, պարոն Յոհաննէս:

ՅՈՒ. Այսուհետեւ ես տասնապատիկ մենակ եմ ինձ զգալու:

Դադար:

ՅՈՒ. Ա՛խ, գոնեա այժմ չը խօսենք այդ մասին:

ՕԲ. ԱՆՆԱ. Պէտք է ձեզ մի բան էլ ասեմ: Ես արդէն իմաց եմ տուել որ շարաթ կամ կիւրակի օրը տանը կը լինեմ:

ՅՈՒ. Արդէն իմաց էք տուել... Բայց, օրիորդ, ինչո՞ւ էք այդքան շտապում:

ՕԲ. ԱՆՆԱ. Շատ պատճառներով:

Դադար:

ՅՈՒ. (Աւելի արագ եւ յուզուած հայլելով): Միթէ պիտի իսկապէս ամենը, ամենը ինչ որ ձեռք է բերուած, զոհել այդ անիծուած պայմանականութիւններին: Միթէ մարդիկ պարզ չեն կարողանում հասկանալ, որ ոչ մի յանցանք չը կայ այն յարաբերութիւնների մէջ, որոնցից երկու կողմն էլ միայն շահւում են, 'արդ'ու կողմն էլ աւելի ու աւելի ազնիւ են դառնում: Միթէ կորուստ է ծնողների համար, երբ նրանց որդին աւելի խոր է զառնում: Միթէ կորուստ է մի կամաց համար, երբ նրա մարդը հոգեպէս աճում է և զարգանում:

ՕԲ. ԱՆՆԱ. (Բարուքեամբ սասելով): Պարոն դօկտօր, պարոն դօկտօր:

ՅՈՒ. (Հանդարտ): Լաւ, միթէ ես իրաւացի չեմ, օրիորդ:

ՕԲ. ԱՆՆԱ. Այս, և ոչ—Դուք դատում էք այլ կերպ, քան ձեր ծնողներն են դատում: Զեր ծնողները այլ կերպ են դատում, քան ափկին կէթէն է դատում: Եւ իմ կարծիքով դրա գէմ բնաւոյնչ չի կարելի ասել:

ՅՈՒ. Բայց այդ հօ ահռելի է—ահռելի է մեզ համար... ոչ
պակաս միւսների համար:

Պադար:

ՅՈՒ. Այս, բայց դուք ինքներդ էք միշտ ասում, որ չը
պէտք է թոյլ տալ որ ակնածութիւնը գէպի ուրիշները մեզ վրայ
տիրանայ, չը պէտք է մարդ իրան կապուած դարձնի:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց երբ մարդ արդէն կապուած է:

ՅՈՒ. Լաւ. ևս կապուած եմ: Աւազ, բայց դուք... ինչո՞ւ
պէտք է դուք, ուրիշների կողմը բռնէք:

ՕՐ. ԱՆՆԱ. ևս սիրեցի նրանց:

Պադար:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք յաճախ ինձ ասել էք որ նախազգում էք
տղամարդու և ինոչ մէջ մի նոր, աւելի բարձր յարաբերութեան
ձեեր:

ՅՈՒ. (Զերմուրեամբ եւ յափօտակուրեամբ): Այո, այդ ես
նախազգում եմ, այդ կը լինի, աւելի ուշ, մի օր: Այս ժամանակ
ոչ անասնականը կը բռնի առաջին տեղը, այլ մարդկայինը: Այլ
ևս անասունը չի ամուսնանալ անասունի հետ, այլ մարդը մար-
դու: Բարեկամութիւն, ահա հիմքը, որի վրայ բարձրացրած կը
լինի այդ տեսակ սէրը: Անլուծանելի, հրաշալի, ուղղակի
մի հրաշակերտ: Բայց ևս գուշակում եմ նոյն իսկ աւելին: ա-
ւելի ևս բարձր, ճոխ, ազատ բան... (Ընդհատում է իրան եւ դի-
մում Աննային): — Եթէ ևս կարողանայի պարզ տեսնել ձեր դէմ-
քը, այժմ,— ես ձեզ ժպտալիս կը տեսնէի: Այդպէս չէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Պարօն գոկտօր... Ոչ, այս անգամ չը ծիծաղեցի:
Բայց ուզիդ ասած—այդպիսի խօսքեր՝ որոնցից մարդ հեշ-
տութեամբ հարրում է... սովորաբար իմ մէջ յարուցանում են
ինչո՞ր երգիծանք: — Բայց հէնց ընդունենք որ իսկապէս ինչո՞ր
նոր, բարձր բան կար—մեր յարաբերութիւնների մէջ:

ՅՈՒ. (Վատացած): Դուք երկրայժում էք: Պէտք է ես ձեզ
թուեմ տարբերութիւնը: Օրինակի համար գտնում էք դուք որ
և է այլ բան կէթէի նկատմամբ, քան սրտագին մի սէր: Միթէ
իմ զգացմունքը գէպի կէթէն աւելի թուլացել է: Ընդհա-
կառակը, նա աւելի խոր ու սւելի լիքն է դառել:

ՕՐ. ԱՆՆԱ. Բայց, ուր է բացի ինձնից մի այլ մարդ, որ
ձեզ կարողանար հաւատալ— եւ միթէ դրանից տիկին կէթէն
պակաս է տանջուելու: — Ես չէի ուզենալ խօսել մեր մասին: —
Դիցուք — բոլորսվին ընդհանուր առմամբ— մէկը գտաւ յարաբե-
րութիւնների մի նոր աւելի կատարեալ ձեւ: Չէ որ այդ յարաբե-

րութիւնները առժամանակ զեռ միայն զգացւում են—դա չափա-
զանց քնքոյց, մատաղ մի բոյս է, որ պէտք է փայփայել ու փայփայել
—համաձայն չեք ինձ հետ, պարոն դօկտօրու—թէ այդ փոքրիկ բոյ-
սը կ'աճի մեր օրով, այդ մենք չը պէտք է յաւսանկու Մենք երբէք
չենք կարող նրան տեսնել մնեցած, նրա պտուղները ուրիշնե-
րի համար են սահմանուած: Պահպանել ապագայ սերունդների
համար ծիլը—այդ գուցէ մենք կարողանանք: Ես մինչև անգամ
կարող էի մտածել, որ մէկն ու մէկը իր պարտականութիւնը
կը համարի այդ անել:

ՑՈՀ. Եւ դրանից գուք ուզում էք հետեցնել, որ մենք պէտք
է բաժանումնքու

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չեի ուզում մեր երկուսիս մասին խօսել:
Բայց, քանի որ դուք արդէն խօսք բացիք... այն. մենք պէտք է
բաժանումնքու:—Գնալ մի ճանապարհով, որ ինձ երբեմն պատկե-
րանում էր... վայրկեաններով... այդ այժմ այլ ես չեմ ուզում: Ես
ես մի ինչ որ նախազգացում ունեցայի—Եւ այնուհետեւ ինձ ես,
ճիշտն ասած, հին նպատակը թուաց շատ աննշան, չնչին մեզ
համար—շատ սովորական:—Այդ ուզզակի այնպէս է, որ կարծես
մարդ լայն ընդարձակ տեսարան ունեցող բարձր սարից իջնում
է և յետոյ ձորում ամեն ինչ այնքան նեղ ու մօտ է գտնում:

Քաղաք:

ՑՈՀ. Իսկ եթէ ոչ մի գոյութիւն դրանից չի վասնգւում:
ՕՐ. ԱՆՆԱ. Այդ անկարելի է:

ՑՈՀ. Բայց եթէ կէթէն այդ ոյժը ունենարս եթէ նա կա-
րողանար բարձրանալ այդ գաղափարների բարձունքը:

ՕՐ. ԱՆՆԱ. Եթէ կէթէն կարողանար—ապրել իմ կողքիս
—այն ժամանակ... այն ժամանակ ես չեի կարող ինքս ինձ ես
հաւատ ընծայել: Իմ մէջ... մեր մէջ կայ մի բան, որ թշնամի
է այդ աղնուացրած, երազական յարաբերութիւններին և որ վեր-
ջի վերջոյ, պարոն դօկտօր, մեզ գերազանցում է: Հիմա չեք կա-
մենում վառել ճրազը:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Մենում է նախասենեակից, նրազը ձեռիքին:
խօսում է ուղղելով խօսիերը դէպի լիս, նախասենեակիլ): Այս-
տեղ զեռ մութ է: Նախ և առաջ ես կը վառեմ լամպը: Մի քիչ
էլ զեռ մացէք դրսում, պարոն Բրատուն: Ես ուզում եմ այնպէս
անել, որ...

ՑՈՀ. (Հազում է):

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Վախինցած): Այդ ով է այստեղ:

ՑՈՀ. ՄԵՆՔ, մայր:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Դու, Յոհաննէս:

ՅՈՒ. ՄԵՆՉ, օրիորդ Աննան և ես—Այդ ովկ է դրսում:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Բաւական դժգոհ): ԵՇ, Հաննէտ Միթէ չէր կարող ճրագ վառել Այնքան էլ լաւ չէ... Այդպէս մթութեան մէջ... (Վառում է լամպը: Օրիորդ Աննան եւ Յոհաննէսը իրանց տեղից չեն շարժում):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Հաննէտ:

ՅՈՒ. Ի՞նչ, մայր իմ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Չես կարող գալ ինձ հետ, ես բան ունեմ քեզ ասելու:

ՅՈՒ. Մայր, միթէ չի կարելի այստեղ ես:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Եթէ դու աւելորդ ժամանակ չունիս ինձ համար, ասան ուղղակի:

ՅՈՒ. Ախ, մայր... ի հարկէ ես պատրաստ եմ, գնանք, Ներեցէք, օրիորդ (Գնում է տիկին Ֆօկերատի հետ՝ պարապելու սենեակը):

ՕՐ. ԱՆՆԱ. (Վերցնում է մի հանի մեղմ ակկօրդներ: Յետոյ երգում է զայլուած ձայնով): «Բանտարկութեան մէջ մինչև մահ տանջուած, մեռար դու երիտասարդ: Կոռու մէջ քո ազգի համար վայր զրեցիր քո գուլիօք» (Լուսմ է: Պարոն Բրաունը ներս է մտնում):

ՕՐ. ԱՆՆԱ. (Երջում է պտտող արողի վրայ): Բարի երեկոյ, պարոն Բրաուն:

ԲՐԱՈՒՆ. Ես չէի ուղում ձեզ խանդարել: Բարի երեկոյ, օրիորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք այժմ շատ սակաւ էք երեսում:

ԲՐԱՈՒՆ. Ախ, միթէ:

ՕՐ. ԱՆՆԱ. Յաճախ է հարց լինում ձեր մասին:

ԲՐԱՈՒՆ. Այդ ովկ է հարցնում իմ մասին: Անկասկած ոչ Հանսը:

ՕՐ. ԱՆՆԱ. Պարոն Յոհաննէսը: Ոչ—Տիկին Կէթէն:

ԲՐԱՈՒՆ. Տեսնում էք:—իսկն ասած, ես... Ախ, այժմ այդ բոլորը երկրորդական բան է:

Պարար:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ թւում է, որ մենք այսօր գտնուում ենք մի այնպիսի տրամադրութեան տակ որ մենք իրար պէտք է պատմէինք մի որ և է ուրախ բան: Այդպիսի մի բան չը գիտէք: Երբեմն պէտք է մարդ ստիպի իրան ծիծաղել: Մի որ և է անեկոտ կամ մի...

ԲՐԱՈՒՆ. Ոչ, իսկ եմ ասում, ոչ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես հաւատացած եմ, որ դուք չեք էլ հառկանում թէ ինչ է ծիծաղը:

Քաղաք:

ԲԻԱՌԻՆ. Ես խսկապէս եկել եմ, օրիորդ, մի լուրջ հարցի մասին ձեզ հետ խօսելու:

ՕՐ. ԱՆՆԱ. Դուք—ի՞նձ հետ:

ԲԻԱՌԻՆ. Այս, օրիորդ Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. (Վեր է կենում). Դէ ինդրեմ ես լսում եմ (Մօտենում սեղանին, բաց է անում իմմօրտէլ (զառնապմակ) ծաղիկների փունջը եւ սկսում ջոկչովիլ ու նորից կապել):

ԲԻԱՌԻՆ. Այս ժամանակ ես գտնւում էի ծանր հոգեկան յուզման մէջ: Ես ակնարկում եմ այն ժամանակը, երբ մնաք միմեանց հետ ծանօթացանք Պարիզում խսկապէս այդ դատարկ բաներ էին: Վերջ ի վերջոյ միթէ նոյնը չէ. մարդ նկարում է ունենալով թէ չունենալով զաղափար: Արուեստը շուայլութիւն է—իսկ ներկայում ծառայել շուայլութեան՝ ամօթալի է թէկուզ ինչ հանգամանքներում էլ վերցնէք: Այս ժամանակ յամենայն գէպս ձեր ծանօթութիւնը ինձ օգնեց դուրս գալ այդ խառնաշփոթ դրութիւնից: Եւ—հէնց այդ էլ ուզում զլիսաւորապէս ասել որ ես այն ժամանակ սովորեցի ձեզ յարգել և գնահատեր:

ՕՐ. ԱՆՆԱ. (Նարուեակելով կարգի բերել ծաղիկները, բերեւակի): Այս ինչ ասում էք այնքան էլ սիրալիք չէ—բայց շարունակէք:

ԲԻԱՌԻՆ. Եթէ այդպիսի խօսքեր ձեզ վիրաւորում են, օրիորդ,—ափսոսում եմ... չը գիտեմ ինչ անեմ, մաքերս շփոթւում են:

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ ցաւում եմ, պ. Բրաուն:

ԲԻԱՌԻՆ. Ինձ համար տաժանելի է և անախորժ: Պէտք էր թողնել որ հանգամանքները ընթանային իրանց կարգով: Եթէ միայն այդ հանգամանքները սարսափելի ծանր հետեանքներ չունենային: Բայց չի կարելի հօ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Կամացով երգում է ինքն իր համար, «մանիր, մանիր, աղջիկս»): Կատուի թաթեր:—Ես լսում եմ, պարոն Բրաուն:

ԲԻԱՌԻՆ. Երբ նայում եմ ձեզ վրայ, օրիորդ, խսկապէս ես չեմ կարողանում զսպել զգացմունքներս... կարծես դուք ընաւ ձեզ հաշիւ չեք տալիս... կարծես դուք չեք նկատում հանգամանքների ամբողջ երկիւզալի լրջութիւնը:

ՕՐ. ԱՆՆԱ. (Երգում է. «Տեսաւ տղան մի վարդ կանգնած»):

ԲԲԱՈՒՆ. Վերջապէս մարդիկ խիզճ ունենա ինչ արած, օրիորդ։ ևս սահմառած եմ զիմել ձեր խզճի դատաստանին։

ՕՐ. ԱՆՆԱ. (Փոքր լուսրիւնից յետոյ, սառն եւ թեթեւակի)։ Գիտեք ինչ ասաց Լևոն Տասերորդ պապը խզճի մասին։

ԲԲԱՈՒՆ. Այդ ևս չը գիտեմ, և իսկն ասած այս վայկենում այդ ինձ քիչ է հետաքրքում, օրիորդ։

ՕՐ. ԱՆՆԱ. Նա ասաց որ խիզճը մի չար գաղան է, որ վինում է մարդուն իրան՝ իր դէմ—Բայց ինդրեմ շարունակէք, ինդրեմ ևս ամրողջապէս ականջ եմ դառնում։

ԲԲԱՈՒՆ. Ես չը գիտեմ, սակայն իսկապէս շատ պարզ բան է։ Այդ դուք էլ պէտք է տեսնէք—որ հարցը մի ամբողջ ընտանիքի կեանքի և մահուան մասին է։ Ինձ թւում է որ բաւական է մի հայեացք երիտասարդ տիկին Ֆօկերատի վրայ, միայն մի հայեացք որ այլ ևս ոչ մի կասկած չը մնայ, ինձ թւում է որ…

ՕՐ. ԱՆՆԱ. (Ելմ լրջօրեն)։ Ախ ահա ինչ, Յետոյ, շարունակէք, շարունակէք։

ԲԲԱՈՒՆ. Այն, և... այս ...և ձեր յարաբերութիւները դէպի Յոհաննէսը...

ՕՐ. ԱՆՆԱ. (Քողոքելով)։ Պարոն Բրաուն.—Մինչեւ այժմ ձեզ լսում էի, կարծելով որ իմ պարտքս է լսել բարեկամիս բարեկամին։ Ինչ որ այսուհետև էք դուք խօսելու, խօսելու էք քամու մէջ։

ԲԲԱՈՒՆ. (Կարե Շուարած լուսրիւն։ Ապա Երջում է, վերցնում գլխարկն ու վերարկուն եւ նեռանում մեսով արտայայելով որ արաւ ինչ կարելի եր)։

ՕՐ. ԱՆՆԱ. (Հենց որ Բրաունը դուքս է զալիս, վիւնջը դէն է շպրտում, եւ յուզուած մի բանի անգամ յետ ու առաջ է բայլում։ Աւելի հանդարտում է եւ խմում է ջուր)։

Տիկին Ֆօկերատը մտնում է դրսի դանից։

Տ. ՖՕԿԵԲԱԾ. (Վախիվիսկելով նայում է Շուեզը եւ հաւաստիանալով որ Երանե մենակ են՝ Ետապով լոսենում է Աննային)։ Ես այսպէս վախենում եմ Հաննէսիք համար. դուք ի հարկէ գիտեք թէ ինչ սարսափելի ցաօկոտն է Հաննէսը։ Իսկ այժմ իմ սրտիս վրայ մի բան է ճնշում ես այլ ևս չեմ կարող ծածկել, օրինրդ Ա՞ննա։ (Նայում է Աննայի վրայ սրտաւած, պաղատող կերպարնելով)։

ՕՐ. ԱՆՆԱ. Ես գիտեմ թէ ինչ էք դուք ուզում։

Տ. ՖՕԿԵԲԱԾ. Պարոն Բրաունը խօսել է ձեզ հետ.

ՕԲ. ԱՆՆԱ. (Ուզում է ասել այս, ձայնը չի հնագանդւում նա ուժով զապում է սկսուող լացն ու նեկենկանքը).
Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Հօգատար ձեւով պատելով նրա ռուբը). Օ-
ՐԻՄՈՐԴ ԱՆՆԱ, սիրելի օրիմորդ, չը պէտք է վատուել Օ, Յիսուս
Քրիստոս, միայն թէ Հաննէսը չը մտնէր ևս չը զիտեմ թէ ինչ
եմ անում Օրիմորդ, օրիմորդ!

ՕԲ. ԱՆՆԱ. Ոշինչ, ոշինչ..., արդէն անցաւ, Մի անհան-
գոտացէք իմ մասին, տիկին ֆոկերատ!

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Դուք էլ էք իմ մեղքս զալիս Այլապէս ես
պէտք է տմարդ լինէի, կսակը մէջ գուք շատ վատութիւններ
էք կրել Այդ բոլորը խոր կերպով ցաւեցնում է սիրուս Բայց
Յոհաննէսը այնուամենայնիւ աւելի մօտ է ինձ համար Այդ հօ-
ես չեմ կարող փոխել եւ դուք, օրիմորդ, դեռ այնքան չահէլ
էք, այնքան ջահէլ Զեր հասակում ամեն բան շատ հեշտ է տան-
ուում:

ՕԲ. ԱՆՆԱ. Ինձ շատ ցաւեցնում է որ բանը այդքան հե-
ռու գնաց:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Երբէք ես այսպիսի բան չեմ արած, ես չեմ
կարող յիշել որ ես մէկին հիւրամեծարութիւն ցոյց տուած չը
լինեմ Բայց ես ուրիշ ճանապարհ չը զիտեմ Այդ եկը վերջինն
է մեզ բոլորիս համար—Այս վայրկեանում ես չեմ ուզում
դատել ես ուզում եմ ձեզ հետ խօսել ինչպէս մի կի՞ն՝ կնոջ
հետ—ե ինչպէս մայր ուզում եմ ես ձեզ հետ խօսել (Արտասու-
բից խեղգուող ձայնով): Երբեք իմ Յոհաննէսի մայրը ես դիմում
եմ ձեզ (Բոնում է Աննայի ձեռքը): Տուէք ինձ իմ Յոհաննէսին:
Վերադրձրէք տանջուած մօրը իր զաւակին, (Ընկնում է արո-
ռի վրայ եւ Աննայի ձեռքը արտասուբով քօնում):

ՕԲ. ԱՆՆԱ. Սիրելի, սիրելի տիկին ֆոկերատ, Այդ...
խորապէս ինձ ցնցում է—Բայց միթէ մի բան կարող եմ ձեզ
վերադրձներ Միթէ մի բան ես ձեզնից իւլել եմ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Աւելի լաւ է այդ մի կողմ թողնենք ես
չեմ ուզում քննել, օրիմորդ: Ես չեմ ուզում քննել, թէ ով է
մեղաւորը, ես միայն այսքանս զիտեմ, իմ որդիս իր կեանքում
երբէք վատ հակումներ չե ունեցել ես այնքան վատահ էի Նրա
նկատմամբ—որ նոյն իսկ այսօր չեմ կարողանում հասկանալ...
(Լաց է լինում): Այդ չափից անց ինքնավստահ բան էր, օրիմորդ
Աննա:

ՕԲ. ԱՆՆԱ. Ինչ էլ ե ասէք, տիկին ֆոկերատ, ես չեմ
կարող պաշտպանուել ձեր դէմ:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Ես չէի ուզենալ ձեզ վշտացնել Երկինք
վկայ, ես չէի ուզում ձեզ դառնացնել, ես ձեր ձեռքում եմ:

ես միայն կարող եմ ձեզ աղաչել և աղաչել իմ սրտիս սոսկալի ցաւի մէջ։ Թողէք Յոհաննէսին աղատ—մինչև դեռ ամեն բան կորած չէ—մինչև որ Կէթէի սիրտը չէ խորտակուած իսպառ Խղճացէք նրան։

ՕՐ. ԱՆՆԱ. Տիկին Ֆօկերատ։ Դուք չափազանց ինձ ստորացնում էք... ես ինձ այնպէս եմ գգում որ կարծես ես ծեծուած լինիմ, ե... Բայց ոչ—ես ուզում եմ ձեզ միայն պարզ ասել։ Վճռուած բան է որ ես գնում եմ։ Եւ եթէ հարցը այն է որ...

Տ. ՖՈԿԵՐԱՏ. Հիմա ինչ պէտք է ասէք, օրիորդ։ ԱՌԻ, լեզուս ի շարժում։ Բայց որոշ հանգամանքներից ստիպուած... հարկաւոր է որ այդ կատարուի շուտով... Եթէ կարելի է հէնց այժմ...

ՕՐ. ԱՆՆԱ. (Հաւաքում է իրերը, որ ինը դրել եր)։

Տ. ՖՈԿԵՐԱՏ. Ուրիշ ընտրութիւն չունեմ, օրիորդ։

Փոքր դադար։

ՕՐ. ԱՆՆԱ. (Իրերը ձեռքին, դանդաղ բայլուածեն դիմում է դեպի դրսի դուռը։ Տիկին Ֆօկերատի առաջ կանգ է առնում)։ Դուք դեռ կարող էք մտածել, որ ես կը յետածգեմ։

Տ. ՖՈԿԵՐԱՏ. Տէր ընդ ձեզ, օրիորդ։

ՕՐ. ԱՆՆԱ. Մնաք բարձրվ, տիկին Ֆօկերատ։

Տ. ՖՈԿԵՐԱՏ. Հաննէսին կ'ասէք ինչ որ մենք խօսեցինք։

ՕՐ. ԱՆՆԱ. Ասհանգիստ մի եղէք, տիկին Ֆօկերատ։

Տ. ՖՈԿԵՐԱՏ. Աստուած ձեզ պահպանի, օրիորդ Աննա։

Աննան հեռանում է դրսի դռնով։ Տիկին Ֆօկերատը աղատ շունչ է քաշում և շուապով զիմում է ննջաւանլու Պատշկամբի վրայ երևում է լապտեր։ Ներս է մտնում ծեր Ֆօկերատը շինէլը հագին, թաւշեայ գլխարկով։ Նրա լեռնեից՝ երկաթուղու կալարանի բեռնակիրը կապոցներով։

ՖՈԿԵՐԱՏ. (Չափազանց զին)։ Այսպէս—Ո՞չ ոք չը կայ։ Դրէք իրերը ահա այստեղ։ Ապասէք, (Որոնում է դրամակալի (պօրտմօնէ) մէջ)։ Ահա քո ջանքերի համար։

ԿԱՊՈՑ ԿՐԿՆՈՅՍՈՒՈՐԸ^{*)} Շատ չորհակալ եմ։

ՖՈԿԵՐԱՏ. Այ մարդ, մի քիչ սպասէք, (Որոնում է վերակուի գրապաններում)։ Յիշում եմ ինձ մօտ դեռ կար երկու օրինակ «Արմաւենու ճիւղեր» զրքից... Ահա։ (Տալիս է նրան մի քանի գրեոյկներ)։ Մի բարեպաշտ մարդ է այդ գրել և ճշգրիտ պատահարներ են։ Թող երջանկութիւն բերի ձեզ։ (Սեղմում է

*) Բեռնակիրը։

եփորուած բեռնակիրի ձեռքը։ Սա չը գիտէ ինչ ասել եւ նեռանում է լուռ։

ՖՕԿԵՐԱԾ. (Հանում է վերարկուն եւ զիխարկը, նայում է ուրցը, ուրախութիւնից օփում է ձեռները, մօտենում է ննջարանի դռան եւ լսում երբ դռան յետելից լուսում է պամուկ, վազկվազ նեռանում է եւ բագ կենում վառարանի յետել)։

Տ. Կէթէ. (Մտնում է ննջարանից, տեսնում է կապոցները, վերարկուն եւ զիխարկը)։ Վահ, Տէր Աստուած, այդ... այդ... հայրիկի իրերն են։

ՖՕԿԵՐԱԾ. (Պտտուող համու նման դուրս է պրծնում վառարանի յետելից, միաժամանակ ծիծաղելով եւ լարով, ամեն ինչ արտակարգ ցայտուն ձեւով։ Նա գրկում է եւ մի հանի անգամ համբուրում կերեկն)։ Դստրէկս, Կէթէ բալիկու (Համբուրում է), ի՞նչպէս էք, ի՞նչ էք անում։ Բողորդ էլ առողջ ու զուարթ էք։ (Համբոյր)։ Ո՞չ, դուք չէք կարող ձեզ երեակայել... (Բաց բողնելով կերեկն)։ Դուք չէք կարող ձեզ երեակայել, թէ ինչպէս բախուառը էի ես այն օր։ (Միջաղով)։ Ի՞նչ է անում արքայազնը, հա-հա-հա- ի՞նչպէս է նորին բարձրութեան քէֆը, հա-հա-հա- նորին բարձրութիւն արքայազն ծնուաի, հա-հա-հա-հա- Ա՛հ, փառք Աստուծոյ, որ ես վերջապէս այստեղ եմ (Մի քի յոգնած)։ Գիտես—(Հանում է ակնցները եւ սրբում ապակիները), Երկար մենակութիւնը այնքան էլ ախորժելի չէ։—Հա-հա- Մարդ մենակ իրան լաւ չէ զգում, պէտք է միշտ երկուսով լինել, հա-հա-հա-հա-։—Հապա, հապա—ես յետոյ գիտես որքան գործ, նեղութիւն մանաւանդ աղքի հետ Աղք, հա-հա-հա, այդ ոսկի է զիւղատնտեսի համար։ Այս նորերումն եկել էր մեզ մօտ պաստօր Պֆայֆէոր, որ վրդովում էր, թէ ինչու մեր տան առաջ աղքահորեր ենք պահում։ (Միջաղում է)։ Բայց ես նրան ասացի, սիրելի պաստօր, ասացի նրան, այդ էլ մեր ոսկէ հորերն են, հա-հա-հա-հա-։ Հապա ուր է իմ պառաւ, իմ թանկագին տասնտիկինս—և իմ Հաննէսը։ (Ոււադրութեամբ զննելով կերեկն)։ Չը գիտեմ, գուցէ լաման է այդպէս անում։ Դու կարծես դեռ ես բոլորովին այնպէս չես, ինչպէս առաջ, Կէթիւն։

Տ. Կէթէ. (Դոււարութեամբ ծածկելով իր յուզմունքը)։ Ա՛հ, —հայրիկ, ես ինձ բոլորովին... (Փարարուելով երա վզով)։ Ես այնքան ուրախ եմ որ դու եկար...

ՖՕԿԵՐԱԾ. Ես երեխ քեզ մի քիչ վախացրի, Կէթէ,

Տիկին Ֆօկերատ երեսմ է դրսի զան մէջ,

ՖՕԿԵՐԱԾ. (Կրկին ուրախութիւնից իրան կորցնելով)։ Կու-

կու, հա-հա-հա-հա: Ահա և նա (Լոելիայն նա եւ իր կինը ընկ-նում են միմեանց զիրկը. լալս են եւ ծիծաղում):

Տ. Կէթէ. (Չը կարողանալով իրան պանել յուզումից—նե-ռանում է):

ՖՕԿԵՐՈՒԾ. (Գրկախառնութիւնից յետոյ խփելով կնկայ մէջ-իրից): Այ դու իմ պառաւ, հաւասարիմ սիրտ:—Այս մեր ամե-նասերկար բաժանուելն էր:—Դէ հիմա միայն Յոհաննէսն է պա-կաս:

Տ. ՖՕԿԵՐՈՒԾ. (Կարճ յապաղումից յետոյ): Այցելուն էլ դեռ այստեղ է:

ՖՕԿԵՐՈՒԾ. Այցելուն:

Տ. ՖՕԿԵՐՈՒԾ. Այս, օրինրդը:

ՖՕԿԵՐՈՒԾ. Հա:—Ռը օրինրդը:

Տ. ՖՕԿԵՐՈՒԾ. Դու հօ ճանաչում ես. օրիորդ Մառը:

ՖՕԿԵՐՈՒԾ. Ես կարծում էի, որ նա գնացել է: Հա, ահա այստեղ և ուտկելովէններ: (Զոկքովիլով կապոցները): Սրա մէջ իւղ է: Զուաներ չեմ բերել այս անգամ. զեռ զարհուրանքով եմ լիշում վերջին անգամ պատահածք: Այստեղ—Հաննէսի համար —սեփական պատրաստած պանիր: Այդ բոլորը պէտք է շուտով տանել մասանց: Ահա և խոզի ապիստած բուդ: Գիտես, Մարթա, ինչ քնքոյշ բան է, կարծես կարմրախայտ լինի:—Բայց դու ոչ-ինչ չես ասում: Առողջ ես դու:

Տ. ՖՕԿԵՐՈՒԾ. Այս, հայրիկ!—Բայց—ես չը գիտեմ—սրտիս վրայ մի բան է ծանրացած: Խոկապէս ես չէի ուզում քեզ ասել—բայց—ես.... դու իմ ամենահաւաստարիմ կենակիցն ես: Ես մենակ այլ ևս չեմ կարող բոլորը տանելի—Մեր որդին... մեր Յոհաննէսը: Քիչ մնաց որ...

ՖՕԿԵՐՈՒԾ. (Թուշելով տեղից եւ վախեցած): Ինչ, Հաննէս, ինչ է պատահել մեր Հաննէսին: Ի՞նչ: Ի՞նչ, ասա:

Տ. ՖՕԿԵՐՈՒԾ. Բայց դու մի անհանգստացիք: Աստուծոյ օգնութեամբ այժմ ամեն բան բարի վախճան ունեցաւ: Օրիոր-դը վերջապէս այժմ հեռանում է այս անից:

ՖՕԿԵՐՈՒԾ. (Խոր ցեցուած): Մարթա: Այդ չի կարող ու-ղիղ լինել:

Տ. ՖՕԿԵՐՈՒԾ. Ես էլ չը գիտեմ թէ որքան հեռու է գնացել նրանց մէջ—միայն.... Այդ մի սարսափելի ժամանակ էր ինձ համար:

ՖՕԿԵՐՈՒԾ. Զեռքս կտրել կը տամ, Մարթա, առանց տա-տանուելու:—իմ որդին—Մարթա, իմ որդին—մոռացած պար-տականութիւն և պատիւ:

Տ. ՖՕԿԵՐՈՒԾ. Ախ, այ մարդ, դու պէտք է այդ ինքդ տես-

նես, դու պէտք է նախ ինքդ քննես ես հօ չը գիտեմ...
ՖՕԿԵՐԱԾ. (Անց ու դարձ և անում, գունատ, մրմնջալով):
Եղիցի կամք Քո, եղիցի կամք Քո...

Տ. ՖՕԿԵՐԱԾ. (Կամացուկ լացում է):

ՖՕԿԵՐԱԾ. (Կանգնում է Երա առաջ եւ խուլ ձայնով):
Մարթա, պէտք է մի տեղ մեղք լինի ծածկուած:—Պէտք է խոր-
հել:

Տ. ՖՕԿԵՐԱԾ. Մենք այդ լոելեայն թոյլ տուինք: Մեր զա-
ւակները աւելի և աւելի հեռացան Աստուծուց և ուղիղ ճանա-
պարհից:

ՖՕԿԵՐԱԾ. Այո, դու իրաւացի ես: Հէնց այդ է պատճառը:
Հէնց դրա համար ենք մենք այժմ պատժւում (Բոնում է կնոջ
երկու ձեռքը): Բայց եկ աղօթենք Աստուծուն խոր հնազանդու-
թեամբ—ցերեկ և գիշեր: Եկ աղօթենք Աստուծուն, Մարթա:

Ե.—Ա.

(Աերջը յաջորդ համարում)